

“Էն օրն ինչ կելնեք քեզ տեսնեմ բարով, իմ սիրտն ու քո սիրտն մին շառթ է դրաբով, Դաս բէ գարդան անենք, գուղայ քնարով, Թամաշայ երթանք գետափն, ինչ կելնի:”

Եւ դրանից աւելի մեծ երջանկութիւն չկայ երգչի համար: Սակայն եարը անտարբեր է մնում եւ երգչին թողնում է օտարի “շարում”, գարբէդար: Սիրակորոյս երգիչը համակուած անհուն թախիծով՝ գիշեր եւ ցերեկ տանջուում, մորմոքուում է սիրոյ կրակից: բայց վերջը նա անմեղ գանդատաներով դիմում է եարին, պատմում իր ցաւը եւ խնդրում, որ իրեն “խօշհալու” անի:

“Է՛տ ինչ խասիաթ ա իմ սիրելի եար, Թող մէկ օր խօշհալ անես, ինչ կելնի. Զուր յիփ դարբէդար անես դարբմանդ, Դուռ գոս քո մօր կշտիցն, ինչ կելնի:”

Այսուհետեւ անցնում է 6 օր, բայց եարը դարձեալ չի գալիս: Երգիչն այլեւս չի կարողանում դիմանալ եւ խելայել ման է գալիս, որ սիրականին գտնի ու իմանայ նրա մտադրութիւնը:

“Գտանեմ սիրտն յիմանամ, Զօռոց տամ, գօֆթարն տեսնեմ. Զօռոց, գօֆթարն շատացէլ ա, Աօր վեց օր ա գնացէլ ա:”

Ապա երգիչը “Փալու” է բանալ տալիս, որ իմանայ եարի “տօմարը”:

“Բաղէր-օղլուս արած եսիր, Խելքս տարաւ էն բիփիրն. Զուլում ինչ էր իմ թախիրն Փալ բանամ, իմ տօմարն տեսնեմ:”

Աերջ ի վերջը երգիչը գնում է եարին տեսնելու. Նրա սենեակն ամբողջ “մէջլիս,,էր, իսկ “թազն,, ոսկէթուփ: Եարը երգչի ձեռքից բռնելով՝ գնում է ծաղիկներով եւ վարդերով զարդարուած գեղեցիկ այգին:

“Զեռս բռնէց մտաւ իդեն Գիւլ գիւլթան բաղն թամամ, Գիւլ գիւլթան բաղում ծաղիկ էր, Անում էր գութսաղն թամամ:”

Այսպիսով երգիչը հասնում է իր նպատակին:

Ահա մեծ մասամբ այն ամէնը, ինչ որ հասել է մեղ երգչի քնարից:

Լիզուն: Երգերը գրուած են ջուղայի բարբառով, որոնց մէջ սակայն գործածուած են բաղմաթիւ թուրքերէն, պարսկերէն բառեր եւ

արտայայտութիւններ: Դրանցից հետեւում է որ Բաղէրն ծանօթ է եղել թուրքերէն եւ պարսկերէն լեզուներին:

Հնդիանուր հայեացք: Բաղէրն մատուրապէս մարձր կանգնած լինելով իրեն ըրջապատող հասարակութիւնից, իր երգերով զօրել ազգեցութիւն է ունեցել իր ժամանակակիցների հոգեկան աշխարհի վրայ եւ մեծ յարգանքու ու պատիւ է ձեռք բերել:

Նրա երգերից մի քանիսն ընդգրկում են ԺԱ. գարի ջուղահայ ժողովրդի կեանքը, որոնց երգիչն եղել է ականատես եւ հարազատութեամբ նկարագրում է մեղ գարեցրանի անցքերը եւ որոնց ուսումնասիրութեամբ հնարաւոր է գաղափար կազմել ջուղահայ ժողովրդի անցքեալ կեանքի ու պատմութեան մասին, եւ դրանով էլ բնորոշուում է երգչի նշանակութիւնը: Ճիշտ է, որ Բաղէրն իր երգերի մօտիւով եւ կառուցուածքով շատ ցած է թէ Յարթունու օղուց եւ թէ Ամիր-օղուց, բայց եւ այնպէս նաև իր աշխարհայեցողութիւններով եւ մտօրում ներով ունի իր համեստ տեղը մեր աշուղականութեան մէջ:

Նոր-ձուռդա:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԼ:



ԵՒԵՐԵԱՑ ԵՐԵՎԵՑԻ ՀԱՅ ԴԱՍԿԱՅՈՒԹԻՒՆ ՄՆՅՈՒՐԻՆԵՐԸ

ԲՆԵԳԻՐՆԵՐ ԵՒ ԶԵՐԵԳՐԵԿԱԿՅ
ՀԵՄԵՄԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Տիկ ՀԱ. 1921, էջ 129:)

Սլբոյն Եւսեբի թարգմանութիւն վասն Սլբոյն Ստեփանոսի առաջին վկային:

Զյաղթաւուղ փառաւորել ի ձեռն սասամի պատերազմի առաջին վկային յետ Փրկչին մերը, որ է Ստեփանոս, զայն որ իբրեւ տէրն մեր ընդամէ հաւը իւրոց նստէր՝ յարեաւ պասկել զնաշատակին: Սա որ կայր ի միջոցի, սա որ ընդ աղջութեան ատելի արդարութեան մարտնչել պատգամովք իւրովլք եւ սպառնութիւն աւելի յանդիմանութեամբ իւրով առ նոսա ծնուցանելի ի նոցանէն ի վերայ իւր. իբրեւ նորա ընդ տեսիլի նորա զարմանային եւ գառնանային, նա ի շերեւ-

— 1 Զեռ. թղ. 25ր—29ր: — 2 Ըստեփանոսի դուրս է ձգուած գաղափար օրինակին մէջ: — 5 Ըստեփանոս: — 10 Զ. ծանուցանէր: — 11 Գ. որ ծ. Զ., 15:

Ղաղթենէ պաշտաման իւրոյ ոչ փոխէր։ Աւրէն է
մեղ խնդրել ի թագաւորէն յաղթողաց վասն ա-
նագանութեան, որ եղեւ մեղ ի ճառէ գլխոյն
վլայից, զի հաւանեսցի եւ ընկալցի ի մէնջ այսաւը,
զի մի լուայց ի նմանէ զայն, որ գրեալն է թէ Ծա-
ռայ չար եւ վատ, ընդէր զայն որ արեամբն իւրով
պատուեաց զիս, դու բանիւք պատուել ոչ ձեպե-
ցար, ասացից այժմ առաջի ձեր գոնեայ զմարտ
վլային, որչափ ժամանակս հրամայեսցէ։ Գիտեմ
թիսուս, զի զպատիւ որ լինի ծառայից նորա խոս-
տովանելոց, առ ինքն կարգէ եւ ընդունի. քանզի
այսպէս ասաց թէ Որ զձեզ ընդունի զիս ընդունի.
եւ դարձեալ առէ թէ Դիւրագոյն լիցի Սոդովմայ
յաւուրն գատաստանի քան այնոցիկ, որ զձառայս
նորա արհամարչեն եւ ոչ ընդունին։ Եթէ ոք,
առէ, ջուր միով բաժակաւ արբուսցէ այնոցիկ, որ
նորա են, եհատ եւ սոտուգեաց երդմամբ զիսա-
տումն իւր, զի մի կորուսցէ զվարձու նորա. բայց
աւրէն է մեղ յիշել, զի եւ յիշատակ եւս իսկ է եւ
այլոց առաքելոց այսաւը, թէպէտ եւ գիտեմ թէ
պատիւ ամենեցուն պարտիմք, այլ առաւել կան-
ևել ասել զպատմութիւն սորա, որ նախ պատիեցաւ
յերուսաղէմ աւրէն է ինձ։ Արդ կամիմ նախ
կարիս մտաց իմոց յայսնել ի մէջ եղբարց եւ
ասել. իբրու թերեւս ոչ իմ միայն իցէ, այլ ամե-
նեցուն հասարակաց։ Զե յորժամ զվկայից ինչ
ասեմ, յերկիւզի լինիմ, բայց ուրախ եմ առաւել՝
յորժամ ես յայլմէ որ խաւսի լսեմ. եւ լուելեայն
այնց որ (J)այլմէ պատմին միտքանին. քանզի ձզի
ոչի զինի այնոցիկ որ պատմին. իբրեւ պատառէ եւ
յորուէ զովովութիւնն ժամանակին, որ շարժմամբ
միտքանութեան զոր ստացեալ ունի, եւ անարդէ
զոյս կեանս՝ որ ի ձեռն մահու լուծանին, եւ ար-
մամարհէ զպատիւ որ ի մարդկանէ է, զի մեծա-
մեծաց կործանումն մեծ է, յորժամ ի մի յայս-
տանէ ըմբոնեսցին. զի արծաթ նենգտաւոր համա-
րեալ է նոցա, եւ օրդիք հոդք աւելի, եւ ի կա-
ռայց դարձեալ վասն առաւել լուսոյն հատանին,
նահատակին իւրոյ. զի աւգուտ է կատարել զըն-
թացու նորա բանիւք մերսվք զի թերեւս ժամանող
իցո՞ք եւ նմանութեան նորա եւ փափաքեսցուք
հաստատել զնախանձ նորա յանձինս մեր։

զասանիմք այսուհետեւ խառնել ուր
այլ թէպէտ եւ մեք սկսանիմք խաւուել, գուք իբրեւ
ի Յիսուսի ընկալարուք։ Աւրէն է մեզ զամենայն
վկայ պատռել եւ եթէ զամենեսեան պատռել
պարտական եմք, քանի եսս զայն, որ եղեւ առաջ-
նարդ եւ սկսանիմք աւրէն իցե մեզ բարձրացուցանել,
որ յետ Ստեփանոսի էին ի Ստե-
փանոս հայեին եւ նմանող լինէին. իսկ Ստեփանոս
ի Յիսուսի նշանակն եւեթ հայէր. թէպէտ եւ

13 2. "առաջաւութեան", զրբ ուղղեցի իշպատեան
կայացածքը: — 15 2. "որ եղեւ առ մեղու
յեսու կամ" ջնջուած է վերադիր գծիկներով: —
17 2. մթէ ի լուսանցու: — 21 2. հրամայեցի: —
19 3. մթէ ժ, 40, կու 4. ժ, 12: — 25 Հմենէ
լիթ. մթէ ժ, 15: — 26 2. աւուրին: — 28 Հմենէ
լիթ. մթէ ժ, 42: — 35 2. ի մշտուազկէմ: — 41—44
լիթ. մթէ չառաւած: — 49 2. յոգ քաւեշի: — 57 2.
լիթ. մթէ չառաւած: ... ի Ստեփան-

վկայեցին երբեք մարդարէքն, այլ ոչ եթէ վասն
այնը որ խաչեցաւն մեռան: Թէպէտ եւ իցէ՝ զի
կանխեցին գիտացին, զի զկնի շարչարանաց խաչին
այլ է պատերազմն այս յօրում Ստեփանոս վկայ
նախ եկաց զկնի Յիսուսի, եւ զճակասոս զարաց որ
հակառակէին, ծակեաց եւ անց, եւ ընդ հետո
տեառն իւրոյ գնաց առաջին. զի սա է մարդ, որ
առաջին խշրեաց զմահ, թէպէտ եւ ասիցես թէ
Յիսուս յաղթութեամբն իւրով մահու զրգուէր
զՄտեփանոս: Գիտասչիր եւ զայս, զի նա Աստուած
էր եւ մարդկան գրգռութիւն ի ծառայակցաց
իւրեանց պատրել պիտոյ էր: Յետ արքայի Յի-
սուսի երեւեցաւ սա զինուոր առաքինի, եւ յաղ-
թութիւն առ ի վերայ մահու: Ոչ եթէ զի ոչ
մեռաւ ասեմ, այլ զի յետ մահու իւրոյ յաղթաւզ
կենաց արժանի եղեւ: Սա է որ յառաջին եկաց
ընդդէմ ուժոյ ցասման Հրէիցն: Սա է որ յանդի-
մանեաց զլացողութիւն ապստամբութեան նոցա,
եւ եցոյ նոցա զպակառութիւն իւրեանց, զի ետուն
արծաթ Յուդայի մատնչի (ի) զուր եւ կաշառեցին
զինուորն առ մոլորութեան իւրեանց. ամենայն զի
ետուն մատնչին վասն զի սպանցեն, եւ զինուորացն՝
զի զրկեսցն զյարութիւնն. բայց կշռամբեցան
այսու իւիք զոր գարձանն առին ի Յուդայէ: Արդ
սա մարդ որ է վկայ յականջա խաչահանուացն
բարձրածյն աղաղակէր թէ կննդանի է այն որ ի
ձեռջ խաչեցաւ, զի ահա ոչ եթէ ի խաչին տեսա-
նեմ զնա, այլ փառաւաք ընդ աջմէ հաւը իւրոյ:
իւրեւ թշնամիկն զայս ի նմանէ լսին առաւել
զաւրանային ցաւք իւրեանց: Սա է մարդ որ ընկե-
րաց իւրոյ զգեղեցիկ գուռնն երաց եւ յայտ արար
թէ՝ այսուհետեւ քուն է մարդկան մահ, զի ահա
խայթոց նորա խորտակեցաւ, եւ զաւրութիւնն մե-
ղացն շիջու, եւ անէծքն հալածեցան, եւ թա-
գաւորն Յիսուս կեանս այնոցիկ, որ մեռան վասն
անուան նորա, առնէ: Զի ահա իւրեւ մարմնովն
կայր Ստեփանոս վասն եռանդեան սիրոյն, որով
վառեալ էր, ի կերպարանս հրեշտակի փոխեցաւ,
զի այսպէտ ասէ զիր թէ՝ իւրեւ նայէին ի նա թշնա-
միքն, երեւեցան նոցա երեւք նորա իւրեւ զերես
հրեշտակի, զի այն որ պաշտելն զՅիսուս ձեպեալն
էր յարժանի փախեցաւ տեսիլն նորա վասն պա-
տուի պաշտաման այնը, որ ի հրեշտակացն պաշ-
տէր, եւ իւրեւ նա զայն զոր սիրեացն տեսանէր,
հալածիչքն չեին արժանի, եւ իւրեւ մարմնչին
ոչ տեսանէին, քանզի Յիսուս իւրոցն երեւի. զի
որ գնեցինն իւրեանց մահ, եւ խորհեցան զանալ
զյարութիւնն այնը որ յարեաւն, [զի] ոչ էին ար-
ժանի տեսանել: Եւ թուի ինձ թէ՝ վասն այնը ոչ
կամեցաւ տէր մեր՝ յետ յարութեանն խաւսել



115 բնդ նոսա. զի զրոյսն հալածեցին եւ զաղբիւրն կենաց խնուշ կամեցան, թէպէտ եւ ինքն բլսումն յանձնէ իւրմէ բլսէր յետոյ։ Արդ Ստեփանոս [եւ] իբրեւ ի մէջ ազդաց բազմաց անցեալ կայր, յորոց սպանումն տեառն մերոյ գեռ եւս տակաւին բուրէր, սկսաւ երկրորդեւ զանուանն արդարոցն առաջնոց. եւ ցուցանեւ նոցա ի ձեռն հին կտակարանացն զնորն։ իբրեւ ասէր ցնոսա, թէ հարը եւ եղբարք՝ եթէ յիշեցէք զործոց հարցն մերոց արդարոց կարէք առնուլ ի միտ զոր ասեմն, զի ի նոցանէն բլսեցին։ Արք, ասէ, եղբարք եւ հարը լուարուք, եւ թէպէտ մարմուկ ի նոցանէ էր, այլ մտաւք հեռի էր ի նոցանէ, առ սկիզբն առնեւ յականջն նոցա, զորս Աստուած Արքահամու խոստացաւ. զի իբրեւ յիշեցուցանիցէ նոցա զհաւատս նոցա, մատուցէ զնոսա առ այժմ ի հաւատս, եւ եղ առաջն նոցա զնախանձ հարցն, զոր ունէին առ Յովսէփ, զի յանդիմանեսցէ եւ ցուցցէ, եթէ միաբանին այս որդիք այնց հարց, զի նոքա վաճառեցին եւ գուք գնեցէք երեսուն արծաթոյ, ըստ նմանութեան այնը, զոր նոքայն առին. եւ զոր աւրինակ նոքա հաւրն իւրեանց ետուն նշան, նոյնպէս եւ գուք, առ այժմ ի հիշեցին, զի թէպէտ առիք ձեզ նշան զիշուդայ։ եւ յիշեցոյ նոցա դարձեալ զՄովսէս՝ այնոցիկ որ Մովսիսիւն պարձէին. իբրու զՄովսէս զրկեցին, զի յարոյց դնա բում ասացէք ցնա թէ ու արար զքեզ մեզ իշեան, Ած նոցա դարձեալ եւ զդաւիթ, զի թէրեւս յիշեցեն զայն որ ի զաւակէ նորա ծագեաց, ասաց նոցա դարձեալ եւ զայն, թէ եւ Սոլոմոն շինեաց նմա տուն. քանզի տամբն պարծէին, ոչ անփոյթ կամեցաւ առնեւ եւ ի նմանէ յանդիմանելն իւրում։ Աստուած ասէ որում երկինք ոչ բաւէին, չէ նա կարաւտ տան, այլ գուք ասէ միշտ Հոգւոյն սրբոյ հակառակ կայք. զի եթէ որ կանխաւն առաքեցան առ ձեզ ի հաւրէ սպանէք առ ժարծութեան ձեռն ձերում, չէ ինչ մեծ այս՝ թէ եւ ի վերայ իմ յադգնիցիք. զի զոր աւրինակ զայն որ կանխաւն քարողեցին ձեզ զլացարուք եւ ոչ լուարուք, նոյնպէս եւ զաս որ եկն առ ձեզ՝ սպանէք առ ժարծութեան երկեալք։ Եւ իբրեւ զայս ասաց ի տեղի, որ ձգեալ էր սէր իւր, անդ հաստատեալ էր եւ տեսիլ իւր, Յայնժամ ամբարձ զայն իւր. եւ աղաղակեաց այնոցիկ որ ոչն տեսանէին, այլ որ տեսանէր եւ երաց նմա զերկինս այն զոր սիրէրն. ոչ լուէր ի տոհմայնոցն իւրօց։ Տեսանէմ ասէ զօրդի մարդոց, այն զորոյ գուք զմարդկութիւն նորա միայն տեսէք, ես ընդ աջմէ Հաւը իւրյաց տեսանեմ զան, ես զայն զոր գուք մատնեցէք ի մահ, ես կենդանի տեսանեմ, եւ զայն զոր գուքն առաջն միայն զատկի ընդէք, ընդ աջմէ առաջն զի կայ.

Յայնժամ խցին զականջս իւրեանց, եւ հրաժարէցին ի լսելց զայս եւ կափուցին զաչս իւրեանց զի հայեացին, իբրու եւ ոչ ինքն այնութեան լոյսն հաւանէր, եթէ յաչս ամբարշտացն ծագեցէ։ Եւ սկսան ձգել ի նա քարինս, բայց նո իբրեւ զվարդ ընդունէր զնոսա, եւ ոչ էին համարեալ վկային իբրեւ զւարագործ ապանողքն իւր այլ իբրեւ զերախտաւորս. ոչ եթէ ընդ այլ ի իւր կամաւ բարի առնէին նմա. եւ կամաւք իւրեանց պահանջնեալ ի նոցանէ հարիէր, զի փութայիշէալ էր հրաժարէլ եւ լինեւ ընդ Քրիստոսի։ Արդ իբրի ոչ կամաւ բարի առնէին նմա. եւ կամաւք իւրեանց դարձեալ դաստիարակ սիրոյ մտացն նորա լինէին թէպէտ եւ նոքա իբրեւ զշարս՝ զշարիս գործէին թէպէտին իւր զեղոյր ի վերայ վկային. եւ արդ եղարքանց իբրեւ չարաչար զՑովկէփ գնոյ տային, Աստուած արժանի պատուէր, եւ նոքա որ ի Ստեփանոս Քրինս ձգէին, զգայնս իւրեանց յերկինս համբառնային եւ սպանանեւ զարդարն փութային, զի ի կեանս նորա փոխեսցի. թէպէտ եւ կարծէին թէ յապականութիւն մատնեն զնա, այլ ոչ ի կամ իւրեանց յապականութենէ, իբրեւ ոչ գիտէին հետացուցանէին զնա. ձգէին ի նա քարինս, եւ ու աղդէին նմա, մինչ սէրն ի ներքոյ կանդնեալ էր առաւել ուրախ էր. իբրեւ քարկոնէրն եւ խաւու փոխանակ Քրիստոսի, քանզի գիտէր թէ պարտական կան եւ Քրիստոսի։ Եւ այլ ոչ ինչ գոյր համար յատական առ նա, զայս զահ համարեալ էր իւր, իւր վաղվաղակի քարկոնէլ ձեպեալ էր։ Բայց ոչ արար անփոյթ առ ի նմանէ Յիսուս։ Այլ եկաց միայն զի պակեացէ զՄովսիանոս. եկաց վկայն առաջնորդին զի ընկալթի զվային երկրորդ, եկաց Աստուած մարդասէր, զի հաւատարիմ մարդոյն աւգնեսցէ, եկաց սուրբն զի սրբչին իւրում երեւեսցի. քանզի ու բարեաց պատճառ է, եւ ամենայն որ սիրէ, վայելի ի սիրելին իւր։ Զոր աւրինակ զի յորժամ բացցուք զաչս մեր, ուրախ առնէմք ի լոյս, եւ յորժամ եցցուք զօլիմք ի նմանէ. իբրու ինքն լցան զի լոյս անդէն մնաց, սցնպէս եւ այն որ ձանձրանայ ձմուն Ստեփանոսի, որ է առաջին կարապետ վկայից։ զրէ զանձն իւր յաւգտէ, զի եթէ փոխանակ այնուն ցիկ, որ է յորդառատ ձառէ նորա ոչ հատանին առնէր, առաւել եւս առնէ աղաւթս փոխանին այնոցիկ, որ է յորդառատ ձառէ նորա ոչ հատանեւ։ Արդ քանզի յամեցաք, կամիք որ զվայս ոչ գովէ եւ իբրեւ պատահեսցէ վկայից ամաշէ. ոչ եթէ վասն ձեր ասեմ զայս, քանզի գիտէմ թէ գուք զայս ոչ առնէմք, այլ զայս առն այնոցիկ, որ ոչ եկին ի պատիւ վկային, նեղմէ ասել զնոցանէ այսպէս ի տրամութեան իմում փան սակաւութեան ժողովցա, զի եւ նոցա հանդերձեալ հեթանոսք քաջակարպ են ի վկայից։ զի ահա թուի ինձ եթէ բազումք էին այնոքիկ։

117 Զ. Ստեփանոս։ — 122 Գ. որ ծք, ի, 2 — 123 Զ. յիշեցէք։ — 127 Գ. որ ծք, ի, 2։ — 130 Անդ, 9. — 137 Անդ, 20. — 140 Զ. ժպրութեան։ — 142 Գ. որ ծք, ի, 46. — 144 Անդ, 47. — 147 Անդ, 48-51. — 150 Զ. ժպրութեան։ — 155 Զ. որ։ — 159 Գ. որ ծք, ի, 55. — 163 Զ. զրոյ։ — Զ. տեսիք։ — 165 Զ. մատնեցիք։ — 166 Զ. կայսոցիք։ — 167 Զ. կայուցէք, ընդ աջմէ առաջէին զի կոյ տեսանեմ։

168 Գ. որ ծք, ի, 56. — 169 Զ. ի լուլ։ — 172 Գ. որ ծք, ի, 57. — 185 Զ. ի ստեփանոս։ — 200 Զ. զտեփանոս։ — 208 Զ. արգէն։ — 209 Ստեփանոսի։ — 222 Զ. հեթանոսք։

վկայեցին աստ, քան զայնոսիկ որ ընդ մեղ այժմ
ժողովեալ են այսր: Որ կարծէ թէ չէ կարաւա
բարեխօսից, մի եկեսցէ ի պատիւ վկայից, զի թէ
աղքատաց տալ որպէս զի եղիցին մեզ վերակացուք
եւ ընկալցին ի յարկս իւրեանց յաւիտենից առաք
պատուէր, որչափ եւս առաւել աւըէն է մեզ պա-
տուել վկայսո, զի ի սուրբը յարկս իւրեանց ընկա-
լցալ եղիցուք ի նոցանէ: Ոչ եթէ ամենեքին առ-
հասարակ պատուեմք, այլ իւրաքանչիւր ոք՝ որպէս
զիարդ կամի պատուէ, եւ որպէս զիարդ պատուէ
ընդունի, զի որք եկին ի պատիւ վկայից, իրբեւ
վկայս երթան, թէպէտ եւ ոչ իցէ գործն հուպ,
բաւական է գտումն մտայ՝ առ ամենադէտն, զի
եթէ որ հայի ի կին ի պատճառ(ս) ցանկութեան շուն
է, սոյնպէս եւ որ ցուցանէ վկայից՝ վկայ է, զի չէ
մարթ թէ չար խլստմունք մտայն ստուգեցին եւ
նոնիունք բարեաց ոչ ընկալցին. ամենայն ոք որ
կամի, գտեալ է նմա գործն հանդերձ կամաւք. զի
են բազումք որ յառաջ քան զվկայութիւն պար-
տաւորին, եւ այլք պատկին, եւ են որ իրբեւ լսեն
զեստովանողաց, կամին թէ եւ ինըբանք ընդ
ի նոցանէ քերանք, լքան եւ ահաբեկ եղեն, եւ
մինչեւ հեռի է սուր, սկսու մարմին(ն) զարհուրել,
եւ մինչչեւ մաւտ են գազանք, եթող զերամ իւր
առ պատահեալ էին, եւ ուսանք մինչեւ հեռի են
արեն իւրեանց զեստովանութիւնն, դոյ զի ի հուր
դոյ զանձն իւր, զի վկայեցէ ի ձեռն հոյս, եւ
ոմանք ընդդէմ գաղանաց կալ փոխանակ Յիսուսի,
եւ եղիցի իւրեւ զդանիկէ ի միտս իւր, եւ միւս
գրկութիւր գրեաց ի սուր, զի եղիցի նմա գլուխ
հետոս, միւսն անարգեալ զորդին, եւ արհամար-
ամենայն զի զիին իւր, եւ ոչ գառնալ յազգատոհմ իւր.
Կէ ի մտի իւրում ընդունի ի Յիսուսէ զհատու-
ցումն նորին: Զինչ եւս [եւ] այլ մնաց, զի ձեպիցիք
եւ կամ ձեզ, զինչ եւս [եւ] այլ մնաց, զի ձեպիցիք
լսել զայն, բայց եթէ այս. զի լինել վկայք փոխ-
թառնեք. այլ ես ոչ ձանձրանամ եւ առանց տւուր
վկայից առնել նոցա յիշատակ, բանք յօյժ յօր-
դորեն զիս, այլ ոչ իրբեւ զգործս, զի թէ լուր մի-
շատակի [յ] նոցա վառի յայնոսիկ որ ասենն, եւ
յայնոսիկ որ լսենն, որչափ եւս առաւել թէ սկըն
ուրա զացի ի մեզ: Այսքան այժմ բաւական են
ոչ եթէ զի կատարեցաւ, այլ աւրէն է զրք՝ ոք
զատուել իրբեւ լուիցեմք. զի իրբու եւ որք զիւր
կնի զհասս պատուի օրբոցն ասսացեն առաւելա-
պէս, մեք եւ նոքա. զի զմի յալթաւղէն գոհաս-
թեամբ խոստովանողաց, միում Աստուծոյ ձշար-
ոի, եւ Որդույ իւրում սիրելց եւ Հոգւոյն սրբոց
փառք պատիւ եւ իշխանութիւն այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից ամեն:

Հրատարակեց չ. Ա. ՎԱՐԴԻԿՅԱՆ

ՀԱՍԳՐԱԿԱՆ

2 1 3 0 3 9 0 6 0 6

(S'hu 21, 1915, t. 2 135:)

(*Constitutive*—*Regulatory*—*Structural*)

8

Այս գրին ծագումը քննելու ժամանակ
ի նկատի առնելու է նաև Ի գիրը: Օտար աղ-
գերը մեր այս երկու գրերուն դէմ մէկ ր միայն
ունին: Այրութենի շարքին մէջ թէեւ այս րին
դէմ հայերէն կը համապատասխանէ Ռ, բայց
տառադարձութեան մէջ մեծագոյն մասսամբ
գրուած է Բ: Գրերու ձեւէն դատելով՝ օտար
այբուրեներու ր գիրը կապուած է մեր Բ-ին
հետ եւ ոչ թէ Ռ-ին, ինչպէս որ քիչ մը վարը
պիտի տեսնենք: Հայերէն ր ծագած է յունա-
րէն Բ գրէն, Gardthausen, Լակարտ եւ Մէնէ-
վիշեան թէեւ Ռ կը հանեն յունարէն Բ-էն,
բայց ամիկա յայտնի կերպով սխալ է: Gardt-
hausen իր ըստածը ապացուցանելու համար՝ կը
յիշէ գոթական ԴՂ ձեւը, զոր նաեւ Մէնէ-
վիշեան դրած է իր ցանկին մէջ, ասոր հետ կա-
րելի էր նաեւ յիշել Լատինական R, որ շատ
նշան է մեր Ռ-ին: բայց թէ մին եւ թէ միւսը
նշանակութիւն չունին մեզի համար, որովհետեւ
չեն կրնար իրը օրինակ ծառայած ըլլալ Ս. Մես-
րոբին: պէտք էր հին յունարէնի մէջ գտնել
այդպիսի երկծիւղ ձեւ մը: Այս տեսակէտով
շատ հետաքրքրական է Սարգիսեանի ցանկին մէջ
յիշուած յունարէն Ո (ր) ձեւը, որուն սակայն
այլուր հանդիպած չեմ: Այս ձեւին պակասու-
թիւնն այն է որ ձախակողմը աւելորդ թեւ մը
ունի՝ որ հայուն մէջ չկայ, իսկ աջակողման
թեւը վարէն առնուած է, մինչդեռ հայուն քով՝
մէջտեղէն է: Կոյն իսկ Սարգիսեան, որ իր ցու-
ցակին մէջ կը յիշէ այս յոյն ձեւը, իր բացա-
տրութեանց ժամանակ Ռ գիրը կը դնէ յն. թ
կամ ասորի; տառէն՝ մէկ քովի վրայ պառկեցը-
սելով զանոնք: Յարութիւնեան կը հանէ Ո գրէն!
Մեր դրացի ազգերու այբուրեններուն մէջ
մէկ գիր մը կայ միայն, որ ըստ կարելոյն մօտ
է հայ գիրն: այս է հին սասանեան արձանա-
գրութեանց Ղ ձեւը: Ասիկա, ինչպէս ցուցակէն
կ'երեւայ, երկու արժէք ուներ ր եւ Վ. Հմմա.
Նաեւ պէտք է, որ կ'արժէ ր եւ Վ: Այսպիսի ա-
նորոշ գրի մը դիմել եւ զայն իրը կաղապար
գործածել անշուշտ չպիտի ուզէր Ս Մեսրոբ,
եթէ հանգամանկըները քիչ մը տարբեր ըլլային: